

**JEREMY SALT, IMPERIALISM, EVANGELISM  
AND THE OTTOMAN ARMENIANS, 1878-1896,  
LONDON, FRANK CASS, 1993, PP. 188.**

**ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ**

Գրախօսուող հատորը՝ հեղինակին հրատարակած առաջին գիրքն է: Ան իր կրթութիւնը ստացած է Մելպուռնի համալսարանի միջին-արեւելեան ուսմանց բաժանմունքին եւ ապա Անգարայի Պիլքենթ համալսարանի քաղաքագիտութեան բաժանմունքին մէջ: Սոյն ուսումնասիրութեանն որոշ հաուածներ լոյս տեսած էին պատմագիտական տարբեր հանդէսներու եւ Ռահմի Ազշելիքի խմբագրած Կալիփոլիէն առաջ եւ յետոյ ժողովածուին մէջ (անգլ., Մելպուռն, 1986):

«Այս գիրքը, — կը գրէ հեղինակը հատորին առաջին իսկ էջին վրայ, — Հայոց ընդհանուր պատմութիւնը չէ ո՛չ ժԹ. եւ ո՛չ ալ որեւէ այլ դարու ընթացքին»: Ան պարզորոշ կերպով կը գրէ թէ, իր ուշադրութիւնը կեդրոնացնելով 1878–96 թուականներուն Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող հայերուն հետ կապուած քաղաքական իրադարձութիւններուն վրայ, միաժամանակ պիտի քննէ եւրոպացի եւ ամերիկացի դիւանագէտներուն, քաղաքական գործիչներուն եւ քարոզիչներուն կողմէ ցուցաբերուած հետաքրքրութիւնն ու մասնակցութիւնը ինդրոյ առարկայ դէպքերուն:

Գիրքը, ինչպէս կարելի է հետեցնել խորագրին մէջ յիշատակուած սկզբնական ու վերջնական թուականներէն, կ'ընդգրկէ Պերլինի Վեհաժողովը եւ անոր յաջորդած ժամանակաշրջանի դէպքերը՝ հայ քաղաքական կազմակերպութիւններուն հրապարակ իջնելը, 1894-ի Սասունի եւ 1895-ի Զէյթունի դէպքերը, 1895 Մայիսին մեծ տէրութիւններուն կողմէ Սուլթանին առաջարկուած բարեփոխումներու ծրագիրը եւ վերջինիս յաջորդած համատարած սպանդը արեւելեան Անատոլուի մէջ, Օսմանեան զրամատան գրաման դէպքը, եւն.:

Ըստ Սուլթի՝ այդ ժամանակաշրջանին Արեւմտեան Հայաստանի մէջ գործող եւրոպացի եւ ամերիկացի քարոզիչները նախապաշարուած էին ընդդէմ թուրք ժողովուրդին ու մահմետական կրօնին եւ հոգեբանօրէն պատրաստ էին անոնց վերագրուած որեւէ մեղադրանքի կամ դաժանութեան հաւատալու: Այդ պատճառով, ըստ Սուլթի, քարոզիչները մանրամասնօրէն կ'արձանագրէին քրիստոնեայ հայերուն հասած անօրինութիւնները եւ նոյնիսկ այդ անօրինութեանց հետ կապուած իրենց բոլոր լսածները: Նոյն քարոզիչները, դարձեալ ըստ

Սուլթի, իրենց նախապաշարումներուն հետեւանքով ամբողջովին կ'անգիտանային կայսրութեան մահմետական բնակչութեան նո'յնքան ծանր դրութիւնը: Սուլթը կ'ըսէ, թէ մահմետականները եւս Հայոց նման կը զանգատէին քրտական քոչուոր ցեղախումբերու ոտնձգութիւններէն, ծանր հարկերէն, տեղական իշխանութիւններու անօրինութիւններէն, եւն.: Սուլթը միաժամանակ կը պնդէ, թէ Արեւմուտքի քրիստոնէական լոպիւն երբեք հաշուի չէր առներ Թանգիմաթի հետեւանքով օսմանեան հասարակութեան մէջ դժուարութեամբ արմատաւորուող ընկերային, տնտեսական, վարչական եւ այլատեսակ փոփոխութիւնները եւ անոնց ներմուծման առընթեր ստեղծուած բարդութիւնները: «Հասարակական կարծիքի ազդեցութիւնը Հայկական Հարցին վրայ դասական արեւելագիտական մտածողութեան կենդանի օրինակ մըն է, կրօնական քարոզչութեան բանական վերլուծումին նկատմամբ գերակշռութեան պատճառով» (էջ 5): Այս է հեղինակին մեթոտոլոկիական մեկնակէտը, որով անիկա կասկածի տակ կ'առնէ Օսմանեան Կայսրութեան մէջ գործող քարոզիչներէն թիւած ամէն տեսակ ազրիւրագիտական նիւթերը եւ կը փորձէ «ճշդել» այդ քարոզիչներուն նախապաշարումներուն հետեւանքով ատենօք Հայկական Հարցի վերաբերեալ Արեւմուտքի՝ յատկապէս Անգլիոյ մէջ ստեղծուած պատկերացումները:

Գրախօսուող աշխատասիրութեան մէջ՝ Սուլթի երկրորդ հիմնական նպատակը Հայկական Հարցի էութեան վերհանումն է: Հեղինակը զայն կը կատարէ օտար քարոզիչներէն թիւած ազրիւրագիտական նիւթերու արժանահաւատութիւնը կասկածի տակ առնելուն առընթեր:

Ըստ Սուլթի՝ Օսմանեան Կայսրութեան մէջ բնակող հայերը իրենց առաւելագոյն թուաքանակին հասան 1890-ական թուականներուն, երբ իրենց ընդհանուր թիւը կը կազմէր 1,3 միլիոն: Այդ 1,3 միլիոն հայերէն միայն 600 հազարն էր որ, ըստ Սուլթի, կը բնակէր կայսրութեան արեւելեան նահանգներուն մէջ:

Սուլթը կը փորձէ ցոյց տալ, թէ երբ օսմանցի հայերը՝ Պերլինի Վեհաժողովէն ետք խաղաղ ընդդիմութենէն որակական անցում կատարեցին դէպի զինեալ պայքար, հայ յեղափոխական կազմակերպութիւններուն նպատակը այնպիսի՝ իրադրութիւն մը ստեղծելն էր, որ մեծ տէրութիւնները ստիպուած ըլլային ուղղակի միջամտել, քանի որ, զարձեալ Սուլթի համաձայն, այդ կազմակերպութիւնները զիտէին որ միայն իրենց ուժերով երբեք պիտի չկարենային պարտութեան մատնել պետութիւնը: Սուլթ 1894-ին Սասունի եւ 1895-ին Զէյթունի դէպքերը կը համարէ այդ նպատակը հետապնդող ըմբոստութիւններ:

Սուլթը խիստ քննադատական մտայնում ունի 1895-ին մեծ տէրութիւններու կողմէ Սուլթանին ներկայացուած բարեփոխումներու ծրագրին նկատմամբ: Ըստ իրեն՝ անիկա Անգլիոյ կողմէ իր ներքին ալեկոծած հասարակական կարծիքը հանդարտեցնելու միտող քայլ մըն էր: Անգլիացի քաղաքական գործիչները պահեստի ծրագիրներ չունէին, թէ ի՞նչպէս պիտի հակազդէին եթէ Սուլթանը մերժէր իրեն ներկայացուած ծրագիրը: Ըստ Սուլթի՝ եւրոպական տէրութիւնները պարտաւոր էին իմանալ, որ Սուլթանը չէր կրնար ընդունիլ ներկայացուած բարենորոգումներու առաջարկը, որովհետեւ անոնց ոգին կը հակասէր մի քանի տասնամեակէ ի վեր արդէն շարունակուող օսմանեան բարեփոխութիւններու տրամաբանութեան: Վերջիններուս նպատակը, ըստ Սուլթի, կայսրութեան տարաբնոյթ հպատակներուն միջեւ մշակութային, իրաւական, ընկերային, տնտեսական եւ այլ բնոյթի տարբերութիւններու համահարթեցումն էր եւ ո՛չ թէ խնդրոյ առարկայ վեց նահապնդներուն «առանձնաշնորհեալ կարգավիճակ» հաղորդելը:

Սուլթը կը պնդէ, թէ 17 Հոկտեմբեր 1895-ին Սուլթան Ապտուլ-Համիտ Բ.-ի կողմէ ստորագրուած իրատէն պարզապէս եւրոպական տէրութիւններու զայրոյթը մասամբ մեղմելու միտող քայլ մըն էր: Սուլթանը քաջ գիտէր, թէ իր այդ իրատէի հրապարակումը կրնար արեւելեան նահանգներու մէջ խժոժութեանց առիթ հանդիսանալ: Այդ պատճառով Սուլթանը մօտ մէկ տարիով ուշացուց հրապարակումը իր ստորագրած իրատէին: Ապա հեղինակը կը փորձէ ցոյց տալ, թէ Սուլթանին մտավախութիւնը դարձաւ իրողութիւն: 1895-ի վերջին ամիսներուն եւ ամբողջ 1896-ի ընթացքին՝ հայկական վեց նահանգները դարձան արիւնահեղութեան թատերարեմ: Ան քանիցս կը հաստատէ, թէ այդ օրերուն հայերն անկասկած շատ աւելի տուժեցին քան մահմետականները, բայց այդ երեւոյթին հիմնական պատճառը, ըստ իրեն, անոնց միջեւ թուաքանակի անհաւասարութիւնն էր: Ան կը պնդէ, թէ յաճախ հայերն էին, որ որոշ տեղեր նախաձեռնեցին բռնութեան: Այն երեւոյթը, որ դէպքերուն ականատես օտարազգի քարոզիչները ազմուկ կը բարձրացնէին հայոց կրած տառապանքներուն մասին եւ ո՛չ հակառակը, Սուլթը կը փորձէ մեկնարանել քարոզիչներու վերոյիշեալ հակաթուրք եւ հակամահմետական նախապաշարումներով: Ան անհիմն կ'որակէ բոլոր այն պնդումները, թէ Սուլթանը ինք անձամբ հրամայած է հայոց կոտորածները ու վերահսկած զանոնք, եւ, ապա, գրքի վերջարանին մէջ կոչ կ'ընէ գրելու Սուլթան Ապտուլ-Համիտ Բ.-ի գիտական, նոր կենսագրութիւնը:

Սուլթը կը փորձէ ցոյց տալ, թէ 1895-ին՝ պահանջելէ ետք վեց նահանգներուն մէջ բարենորոգումներ մտցնել, յետապային Մեծն

Բրիտանիան նախանձախնդիր չեղաւ անոնց իրականացման գործընթացին, ո՛չ ալ միջամտեց յօգուտ հայոց, պարզապէս որովհետեւ նախօրօք չէր կազմած այդ պարագային գործի դրուելիք պահեստային որեւէ ծրագիր: Հեղինակը միաժամանակ կը նշէ, թէ յետագային Սուլթանին Գերմանիոյ հետ մերձեցման նախադրեալներէն մէկը Մեծն Բրիտանիոյ կեցուածքն էր Հայկական Հարցին նկատմամբ:

Սուլթը իր գործին նախարանին մէջ կը յիշէ, թէ այս գիրքը տպագրել տալու ուղղութեամբ՝ հանդիպեցաւ բազմաթիւ դժուարութեանց: Տարբեր հրատարակիչներ տպելու հաւանութիւն տալէ առաջ դիմեցին տարբեր մասնագէտներու եւ ստացան հակասական կարծիքներ: Սուլթը կ'ըսէ, թէ հայ եւ հայամէտ գրախօսողները գինք մեղադրեցին փաստերը անգիտանալու, օսմանեան կայսերապաշտութիւնը պաշտպանելու, ցեղապաշտութեան եւ նոյնիսկ «թրքական լեզուաբանական շովինիզմի» մէջ: «Միւս կողմէ ստացուեցաւ աւելի կառուցողական քննադատութիւն մը, նոյնիսկ՝ խրախուսանք» (էջ 1): Այս իրերամերժ գնահատականները վստահօրէն պիտի շարունակուին գիրքին հրատարակ իջնելէն ետք, քանի որ, այսօր, թրքական պետութիւնն ու թուրք պատմաբանները յաջողած են Հայկական Հարցի եւ յատկապէս Հայկական Յեղասպանութեան ուսումնասիրութիւնը ամբողջապէս քաղաքականացնել եւ այդպիսով հասնիլ այն իրողութեան, որ անկախ երեւիլ ցանկացող պատմաբանները խուսափին համայն մարդկութիւնը հետեքբերող այս հարցի ուսումնասիրութենէն: Այլեւս «ցեղասպանութիւն» եզրն օգտագործելն անգամ կը նկատուի իբրեւ կողմնակցութիւն:

Սուլթի աշխատութիւնը առանձնապէս փայլուն չէ: Ան կը խոստովանի, որ շատ թոյլ է թրքերէնի իր իմացութիւնը: Գիրքը շարադրելու ժամանակ ան սահմանափակուած է օգտագործելով բացառապէս անգլերէն սկզբնաղբիւրներ ու գրականութիւն: Օգտագործուած գրականութեան ցանկին մէջ չկայ ո՛չ իսկ մէկ հայերէն կամ թրքերէն — օսմանեան՝ թէ արդի — աշխատասիրութիւն: Արտայայտուած կարծիքները նոյնիսկ չեն բովանդակեր մասնաւոր նոր մօտեցում մը եւ պարզապէս կրնան շարունակութիւնը համարուիլ թուրքիոյ եւ ԱՄՆ-ի որոշ շրջանակներու կողմէ վերջին տարիներուն ձեռնարկուած 1915 թուականի Յեղասպանութեան մասին պատմող սկզբնաղբիւրներուն՝ այս պարագային օտարազգի քարոզիչներու գրաւոր ժառանգութիւնը վարկաբեկելու արշաւին:

Այսուհանդերձ՝ այնտեղ բարձրացուած որոշ հարցեր արդի պատմագիտութեան մէջ տակաւին չեն ստացած իրենց անառարկելի պատասխաններն ու մեկնութիւնները: Սուլթի այս գործին հրատարակ գալ իսկ յաւելեալ պատճառ մըն է, որ յետագային ուշադրութիւն

դարձուի անոնցմէ գոնէ մի քանիին: Առաջինը՝ օսմանեան պետութեան սահմաններուն մէջ գործող Հայ քաղաքական կուսակցութիւններու Հետապնդած անմիջական նպատակներու վերհանումն ու անոնց քաղաքական կշիռի ճշգրիտ չրջանակներու որոշումն է: Միայն այդ պատասխաններուն հիման վրայ է որ կարելի է անառարկելի կերպով հակաճառել (կամ համաձայնիլ) Սոյթի արտայայտած միտքերուն: Հայ քաղաքական կուսակցութիւնները գոյութիւն ունին աւելի քան հարիւր տարիէ ի վեր: Բազմաթիւ գիրքեր են լոյս տեսած անոնց գործունէութեան մասին մինչեւ 1915 թուականը, մեծ մասամբ՝ գովասանական բնոյթի: Բայց այդ գործերուն հազիւ մի քանիսն անկախ մասնագէտներու գրիչին արգասիքն են եւ ի շարս այլոց՝ այդ պատճառով ալ չեն բաւարարեր ժամանակակից պատմագիտութեան պահանջները:

Սոյթի կողմէ բարձրացուած երկրորդ կարեւոր կէտը, որ ցարդ գրեթէ աննկատ մնացած է Հայագէտներու կողմէ, նոր օսմանցի եւ երիտթուրք բարենորոգումներու շատագովներուն կեդրոնաձիգ ճրգտումներու եւ Հայկական կեդրոնախոյս ցանկութիւններու յարաբերակցութեան եւ նոյնիսկ բախման լոյսի ներքոյ Հայերու կողմէ մասնակի բարեփոխումներու պահանջները իրագործելու հնարաւորութեան հարցն է:

Թուրք պատմագիտութեան Հետապնդած նպատակներուն ազնուութեան շուրջ յաճախ յարուցուած են կասկածներ: Փաստ է, սակայն, որ այն օրուրնէ ի վեր երբ թուրք ու յետագային որոշ ամերիկացի պատմաբաններ սկսան կասկած յայտնել կամ ամբողջովին ժրխտել 1915 թուականի Յեղասպանութիւնը, Հայագիտութիւնը, ընդառաջելով այդ մարտահրաւէրին, խորացուց իր իմացութիւնը այդ վիճալարոյց դէպքերու ուսումնասիրման ուղղութեամբ: Սոյթի աշխատանքն իր բոլոր վիճելի կողմերով ու թերութիւններով հանդերձ անհրաժեշտ է դիտել այդ տեսանկիւնէն:

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ